

Չարգելի հայրենակիցներ,

Խորին հարգանքով շնորհավորում եմ բոլորիս Չայաստանի Չանրապետության բանակի օրը:

Երբ թերթում ենք հայոց պատմությունը, ականտես ենք լինում հայ ռազմիկի, զորականի գործած սխրանքներին: Մարտիկի ոգին մեր ազգի գենի մեջ է, իսկ երկիրն անվտանգ պահելու գործունը՝ արդեն հազարամյակներ մեր տեսակի մեջ:

Մենք՝ հայերս, անկախություն ու խաղաղություն սիրող ազգ ենք, սակայն չենք հանդուրժում անարդարություն և պատասխանում ենք, ըստ արժանվույն: Մեր բանակն ու մեր զինվորը մեր հասարակության կարևորագույն ինստիտուտներից են և այն, իրավամբ, կարելի է համարել մեր պետության խորհրդանիշներից մեկը:

Երբ բազմակողմանի ուսումնասիրում ենք մեր պատերազմների, ռազմական գործողությունների պատմությունը, պարզ է դառնում, որ հայ ազգը յուրաքանչյուր պարտությունից հետո արագ ոտքի կանգնելու ու կորցրածը վերադարձնելու փայլուն ձիրք ունի:

Եվ ուրեմն, շնորհավորում եմ մեր ժողովրդին ու մեր զորականին տոնի կապակցությամբ, մաղթում եմ կուռ ոգի, անկոտրում կամք ու անսպառ ռազմական տաղանդ՝ դիմակայելու մեր սահմանների ապահովման հարցում առաջացած բոլոր մարտահրավերին:

Թող որ մեր Չինված ուժեր զորակոչված անձանց թվաքանակը վերադառնալիս՝ չպակասի:

Բարին ու խաղաղությունը մեր երկրին ու մեր ընտանիքներին:

Չարգանքով,

Վահրամ Խաչատրյան